

ԳՈՎԵՍՏ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ

ԵՒ ՄԻՇՏ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄԻՆ

Երկինք բնակողին վայելչաձեւ բարեկարգութեամբ եւ գեղեցիկ յօրինուածքով զարդարուած տաճարը, Հօրը փեսայացած Սօսքին հարսնութեան մաքուր եւ պարկեշտ առաքաստ կոյս Մարիամ Աստուածածինը, Քրիստոսի առաքելաչէն սուրբ եկեղեցիներ, լիակատար հաւատքով հանդէպ սուրբ Երրորդութեան՝ հոգեգուարճ նուազարաններով եւ գովերգու օրհնաբանութեամբ բարձրաձայն ներբողենք տօնախմբութեան այս օրս. որովհետեւ այսօր է որ համայնաբնակ տիեզերքը աւետիսը ստացաւ: Զի Հօրը հաւասար Սօսք Աստուածը, համագոյակից ըլլալով եւ կեանքի Հոգին (կրած) իր մէջ՝ այսօր ծնաւ Դաւիթի արքայաչէն քաղաքին՝ Բեթղեհէմի մէջ, որովհետեւ, եբրայեցերէն թարգմանուած, Բեթղեհէմ կը նշանակէ իր երդումը: Ասոր համար իր անձին վրայ երդուընցաւ էութեամբ ճշմարիտը՝ նախագուշակ մարգարէութեամբը, եւ իրագործեց իր ծառաներուն խօսքերը, արդարացուց պատգամաբեր հրեշտակներուն դիտաւորութիւնները:

Այսօր հրեշտակապետին աւետալուր եւ ուրախաբեր ձայնը՝ (ուղղուած) կոյս Մարիամին՝ մինչեւ հեռունները կը հնչէ ի լուր համայն տիեզերքին, թէ «Այսօր ծնաւ ձեզի փրկիչ մը՝ որ Դաւիթի քաղաքին մէջ օծուած տէրն է»:

Այսօր մեծապէս կը ցնծայ համայն տիեզերքը, որովհետեւ արեւելեան դուռը բացուեցաւ եւ աստղանշան ճամբով ընծայաբեր մոգեր փութացուց երկնային հրեշտակներու արքային նուիրելու համար արքայական ոսկի՝ հողէն ինքնացայտ, հրաշագործութեամբ մաքրագտուած եւ լուսաճաճանչ շողիւններով գունազարդ, կնդրուկ՝ բացառիկ անուշահոտութեամբ. եւ ընտիր ու լիախորհուրդ զմուռներ, Ոսկին՝ իբրեւ (խորհրդանշան) ինքնակալ եւ յաղթող թագաւորի, կնդրուկը՝ իբրեւ մարդասէր եւ երկնային Աստուծոյ, իսկ զմուռը՝ իբրեւ ինքնակամ մեզի համար մեռնողին եւ գետնին մէջ թաղուողին, որ մեր իսկ խաչելութիւնն ու երկրային կենցաղին մեռնիլը կը նշէ, ըստ Պօղոսի առաքելախօս վարդապետութեան՝ թէ «Մեռցուցէք երկրային ձեր անդամները». եւ թէ՛ «Եթէ մեռնիք դուք, ձեր կեանքը, Քրիստոսի հետ, պահուած է Աստուծոյ մէջ»:

Որովհետեւ արեւելքէն ճամբայ ելած մոզերուն աստղանշան ուղեւորութիւնը կը մատնանշէ յաջորդ անգամ արեւելքէն յանկարծահաս, փայլակնացայտ եւ փառապանծ գալուստը՝ Քրիստոսի՝ որ զինք սիրողներուն ազնուագոյն նուէրներ պիտի տայ։ Եւ դարձեալ, ինչպէս առաջին գալուստին Բեթղեհէմի մէջ ծնաւ, եւ, ըստ Դաւիթին, խաղաղութիւն բերաւ երկրին, նմանապէս երկրորդ վայրը եւս պիտի գայ զգաստ եւ տեսանելի վարքով, եւ հայրենական փառքով ու իշխանութեամբ պիտի դատէ ամբողջ տիեզերքը։ Եւ ես, կրկին, հրեշտակային աւետուինն եւ գովաբանութեան ձայնակից՝ պիտի հրահրեմ մշտաբուխ խայտանքով միեւնոյն եռանդը, եւ շարունակեմ, հանճարեղ վերագոյններուն համանման խօսքերով՝ ներբողական հաւատքիս։

Այսօր ուրախ երգեցողութեամբ եւ գեղեցիկ ու ցնծալից պարերով կը խայտան երկնայիններն ու երկրայինները, այսինքն իրարու ձայնակցած հրեշտակներու խումբերն ու մարդոց բազմութիւնները՝ գալուստովը Աստուծոյ Որդիին։

Այսօր հասաւ մեզի ժամը ուրախութեան, եւ սուրբերու խումբերը պայծառ ջահավառութեամբ տեսակ տեսակ կը լուսաւորեն արժանաւոր մեծ օրուան փառքը՝ գալուստովը Աստուծոյ Որդիին։

Այսօր վերահայեաց դէմքով զուարթածաղիկ, երփնազեղ դարունը սաղարթափթիթ կանաչութեամբ կը վայելչանայ՝ գալուստովը Աստուծոյ Որդիին։

Այսօր աստուածգիտութեան ցօղը ստացանք (մեր) սրտերու խորշերու (բոլոր) անկիւններուն, որովհետեւ տատարակներու ձայնին քաղցրութիւնը լսուեցաւ մեր երկրին մէջ՝ գալուստովը Աստուծոյ Որդիին։

Այսօր կանանչութեամբ վերամբարձ աստուածային ամպեր եւ հոգեզուարճ ցօղեր մարդոց վրայ կ'անձրեւեն՝ գալուստովը Աստուծոյ Որդիին։

Այսօր հոգեխաղաց հոսանքներ եւ առատաբուխ վտակներ մշտոռոգ կ'ողողեն բուրաստանանման ծաղկած Եկեղեցւոյ աւետարանատունկ մանուկները՝ գալուստովը Աստուծոյ Որդիին։

Այսօր բոլոր արարածները լոյսով փաղփուկ կը ճառագայթեն՝ գալուստովը Աստուծոյ Որդիին։

Այսօր երկիրս երկինք եղաւ, որովհետեւ աշխարհ եկած՝ Աստուածը կը տեսնուի։

Այսօր ազամածնունդ հողաստեղծ զարմը երկնաքաղաքացի անուանակոչութեամբ արձանագրուեցաւ կեանքի մատեանին մէջ՝ գալուստովը Աստուծոյ Որդիին։

Այսօր նորափետուր հրաշալիքներով ճարտարօրէն բարեգարդուեցանք՝ գալուստովը Աստուծոյ Որդիին։

Այսօր դառնահամ աղբիւրներ եւ լճացած ջրակոյտեր կը դառնան քաղցրաճաշակ՝ գալուստովը Աստուծոյ Որդիին:

Այսօր աղբիւրներէն վազած առատաբուխ վտակներ կ'ոռոգեն ծաղկանոցներու մարգագետինները՝ գալուստովը Աստուծոյ Որդիին:

Այսօր համատարած ծովը ծփանքներու իր նուազածութեամբ ծագէ ի ծագ շառաչելով կը խայտայ խաղաղազնաց ու գեղեցկաճեմ՝ գալուստովը Աստուծոյ Որդիին:

Այսօր բազմազալար գետեր յորճանասոյզ կը պտուտքին եւ համարձակ դանդիւններով կը վէտվէտին գեղածովի՝ գալուստովը Աստուծոյ Որդիին:

Այսօր ջրաբնակ ձուկերուն դասը եւս վերածնած եռապատիկ հըրճուեցաւ՝ գալուստովը Աստուծոյ Որդիին:

Այսօր երկնային օդերը եւս յօգուտ մարդոց սփռուած ծաւալեցան՝ գալուստովը Աստուծոյ Որդիին:

Այսօր բարձրաբերձ լեռներու կատարները եւս վարսագեղ պճնազարդուեցան՝ գալուստովը Աստուծոյ Որդիին:

Այսօր երկնաճեմ երկու լուսաւոր ջահերը պայծառ լապտերներով կը փալփալան՝ գալուստովը Աստուծոյ Որդիին:

Այսօր երկրէն կը փայլատակէ արդարութեան արեգակը՝ որու բուժիչ զօրութիւնը ճառագայթներուն մէջ է:

Այսօր սատանայական առաջաստին խաւարը փարատեցաւ եւ վերայայտնուած տեսանք ճշմարտութեան լոյսը՝ որովհետեւ Քրիստոս աշխարհ եկաւ:

Այսօր անստեղծը կը գոյանայ եւ անտեսը տեսանելի կը դառնայ՝ իր մարդեղութեամբը:

Այսօր անսահմանն ու անբովանդակելին կը բովանդակուին եւ անժամանակը սկիզբ կ'առնէ իր մարդեղութեամբը:

Այսօր ինքնակամ աշխարհ կու գայ ա'ն, որ աշխարհի մէջն է, եւ որմէ երբեք չբաժնուեցաւ:

Այսօր լեռները վար կը բերէ՝ ծառայեցնելու համար, եւ հնազանդած՝ կը սպասեն իր հրամանին:

Այսօր սնոտի անձնապաշտութիւնը ջնջուեցաւ ու վերացաւ, եւ գթասիրտ աստուածապաշտութիւնը աշխարհի վրայ ծագեցաւ՝ գալուստովը Աստուծոյ Որդիին:

Այսօր հին տազնապալից տխրութիւններէն ազատած նոր Իսրայէլի նմանեցանք՝ Աստուծոյ Որդիին գալուստովը փրկուած:

Այսօր հրեաներու տգիտութեան լիացած շտեմարանները պարպուեցան, իսկ հեթանոսներու կարօտեալ շտեմարանները կը գեղուն՝ Սուրբ Հոգիին շնորհատուր պարգեւներովը առլցուն:

Այսօր վերնաբնակ ամբարտաւանները գետնապատ կործանեցան, եւ խեղճ տանկները օրհնաբանութեամբ մինչեւ երկինք բարձրացան:

Այսօր փրկուեցանք փարաւոնի տաժանելի աղիւսագործութենէն, եւ ազատութեան հրովարտակը ստացանք՝ Քրիստոսի աշխարհ զալուստովը:

Այսօր չեղեալ համարուեցաւ թշնամիին դատավճիռը՝ Քրիստոսի աշխարհ զալուստովը:

Այսօր աշխարհի ծովակուտակ մեղքը հալածական կը փախչի եւ Յորդանանը ետ կը դառնայ ընկրկած, մարդիկ կը լուսաւորուին եւ Յիսուսով կը մկրտուին, որովհետեւ աշխարհ եկած՝ Աստուածը կը տեսնուի:

Այսօր Յովհաննէս, որդի Զաքարեան տոհմի դուստր, իր պառաւ մօր՝ Եղիսաբէթի, սերած Ղեւիի երկրորդ տոհմ Մակաբայեցիներու մեծ քահանայական շառաւիղէն՝ զալով Յորդանանի յորձանապտոյտ ջուրերուն շրջակայքը կը մկրտէ Քրիստոսը, վկայ կ'ըլլայ համապատիւ սուրբ Երրորդութեան, կը տեսնէ ազաւնակերպ սուրբ Հոգիին էջքը Քրիստոսի գլխուն վրայ եւ (կը լսէ) հայրական ձայնը՝ թէ «Այդ է սիրելի զաւակս, լսեցէք անոր»:

Այսօր անխոնարհելին գլուխը իր ծառայի'ն կը խոնարհեցնէ՝ որպէսզի բարձրացնէ մեզ իր զալուստովը:

Այսօր անպարագրելին՝ իր մարդեղութեամբ կը ձեռնադրուի՝ որպէսզի ականատես դարձնէ մեզ իր աստուածութեան:

Այսօր կը յայտնուի աշխարհին, եւ ամէնքը լոյսով կը ճառագայթեն:

Այսօր աստուածաշունչ քնարը՝ Յովհաննէս, ահաւոր ու հրակէզ գլխուն կը մօտենար, լուացուած՝ կը մաքրուէին Յորդանանի ջուրերը ապականութեան եռեւեփումներէն:

Այսօր ջուրերը աշխարհը մաքրելու կը միտին, եւ յստակացած՝ կը մաքրագտուին ջուրերու բոլոր տարրերը՝ յայտնութեամբ մեր Աստուածին:

Այսօր երկնքի արքայութիւնը ժառանգեցինք, որովհետեւ անոր թագաւորութիւնը վերջ հունի:

Այսօր լեռները քաղցրութիւնը բխեցին, եւ բլուրները՝ կաթը՝ զալարիքին մէջ:

Արդ կրկին բանալով սրտի յոյզերուն ընդունարանը՝ վերստին գեղեցկացնենք ներքողալից նուագարաններով մեր գովքը. երթանք աստուածային հանճարի նոյն աղբիւրէն ճաշակելու իմացական վտակները, եւ անով իսկ անցնենք ներքողեանիս տունկերը՝ սուրբ Աստուածածին կոյս Մարիամին համար, համարձակաձայն ծաղկեցնենք մեր հրայրքին բանիբուն արգասիքը՝ ձայնակից ըլլալով հրեշտակին ահաւոր խօսքին:

Ուրախացի՛ր խնդամիտ սրտով, Տիրուհի կոյս եւ Աստուածածին Մարիամ, դուստր մարգարէութեան շնորհքին եւ մայր՝ Տիրօջը, որ

վայելչութեան Աստուած՝ արդարութեան արեգակը ծնար, եւ քեզմով է որ տեսանք ու ճանչցանք ճշմարիտ լոյսը՝ Քրիստոս, որ կը լուսաւորէ աշխարհ գալիք ամէն մարդ:

Ուրախացի՛ր բերկրալիւր սրտով, օրհնուածդ կիներուն մէջ, պայծառազարդ արեւելք. քեզմէ փայլածագեց լուսաւորութիւնը Քրիստոսի աստուածաշունչ երեսներուն, եւ արթնցուց մեր սրտերը՝ ուղղափառ հաւատքի գիտութեան խորհուրդը քննելու:

Ուրախացի՛ր հրճուալից սրտով, ամէնօրհնեալ ծնող եւ աղախին Տիրոջ, որ արժանացար ականատես եւ սպասաւոր հանդիսանալու Հայր Աստուծոյ Ոօսքին:

Ուրախացի՛ր բերկրալիւր ձայնով, բարեպաշտ կոյս եւ անարատ ծնունդ նախաստեղծին եւ ամէն ինչ ստեղծողին, որովհետեւ քու մէջդ ուղեց բնակիլ անպարագելի Աստուածը:

Ուրախացի՛ր մեծ խնդութեամբ, Սրբուհի Մարիամ, օրհնուածդ կիներուն մէջ, պանծալի եւ պայծառ երկինք, փառքի աթոռ՝ ամենաբարձր ճշմարիտ Աստուածին:

Ուրախացի՛ր խնդամիտ սրտով, մայր լոյսի եւ բերկրութեան, ծաղիկներու անդաստան, ոլորուն գանգուրներ՝ գոյնզգոյն, ցօղալիւր եւ մշտագուարճ, շուշանաբեր հովիտ եւ յաւէտ սրբասուն վարքով մանուշակ, որ մեզի համար հրաշագործեցիր Աստուծոյ Բանին մարդեղութեան գեղեցկատեսիլ անուշահոտութիւնը:

Ուրախացի՛ր վայելչափայլ սրտով, չհարսնացած Տիրուհի կոյս եւ Աստուածածին, դրախտ փափկասուն՝ այլափթիթ բողբոջներով, այլազան գեղեցկութեամբ, առաքեալներով, մարգարէներով եւ վարդապետներով, ամենազօր մարտիրոսներով եւ բոլոր սուրբերով:

Ուրախացի՛ր եւ ցնծա՛ սիրով, մայր լոյսի եւ բերկրանքներու, ազնիւ բարունակներով ողկուզաբեր այգի՝ գինեւէտ եւ դալարագեղ իբրեւ չառակդ՝ քեզմէ՛ վերընձիւղեցաւ հայրական ճշմարիտ տունիլը՝ Քրիստոս. եւ հրէական ատեանին բարունակները երկու մասի բաժնուած՝ չանչն ու մրուրը մնաց յափշտակութեան բաժին՝ իշխանաւորներուն: Իսկ մեզի, քեզ դաւանողներուս, ամենասուրբ, անարատ եւ արդարակորով կոյս Աստուածածին, մեր Աստուածին եւ քու Որդիդ երկրպագողներուս, քառամատեան առատաբուխ վարդապետութեան ըմպելիին մատուցակած՝ կը սպասարկեն մինչեւ յաւիտենական ժամանակներ:

Դարձեալ ուրախացի՛ր արժանապատիւ սիրով, կոյս Մարիամ, ծնող եւ աղախին ամէնուն Փրկիչին եւ Աստուածին, աստուածահրաշ եւ հոգեակար հնձան, որ շարունակ կը բխես Քրիստոսի գինիին անուշահամ, առատաբուխ եւ հոգեծաւալ վտակներուն հոսանքները՝ հնձանաչէն եկեղեցիին մէջ, (գինիի)՝ որ ահա վեց դարերու հոլովումով պիտի շարունակէ մատուցակուիլ մինչեւ գալիքի եօթներորդ օրուան

մուտքը՝ ոչ միայն հոգեւին զմայլեցնելով փեսայացած Բանն Աստուծոյ առաքաստին մանուկները, այլեւ գալիքներուն մէջ իսկ շարունակութիւն՝ ամբարելով բարիքներու պարգեւաբաշխութեան շնորհքները:

Ուրախ եղիր Մարիամ, շնորհազարդ տաճար, երկնային հարս եւ արքունական լուսաւոր առաքաստ, ընդունարան՝ Բանին հոլթեան միաւորման:

Ուրախացի՛ր, չհարսնացած Մարիամ, մայր Տիրոջ, հոգեւոր բաժակ, եւ աստուածային շնորհքները պարգեւող Քրիստոսի աւետարանագիր առաքեալներուն՝ որ տիեզերքը արբեցուցին:

Դարձեալ երանաւէտ ձայնատրութեամբ ուրախացի՛ր, սրբուհի Մարիամ, օրհնուածք կիներուն մէջ, հոգեւոր ուռւկան եւ հոգեւորութեան լայնածաւալ կազմած առաքելախումբ ձկնորսներուն, որոնք այլազան սերունդներով յաւիտեանական կեանքին եւ անծերանալի բնակակցութեան կարթեցին համատարած տիեզերքը:

Ուրախացի՛ր երջանկութեամբ, չհարսնացած Մարիամ, Քրիստոսի անարատ եւ մաքուր աղանի, շնորհատու Հոգիին ընդունարան, որ բարեզարդուած՝ ուղիղ կ'առաջնորդուին հեթանոսներու եկեղեցիները:

Դարձեալ խնդալից ուրախացի՛ր, Մարիամ, պտուղ երկնքի արքայութեան. պատուական քու մայրութեանդ շնորհիւ եկեղեցիները նորոգ սքանչելիքներով զարդարուած՝ առաքինութեան լայնարձակ լեռնալանջերով կը պտղաւէտին պայծառ՝ ընծայաբերելու մեր Աստուածին՝ զաւակիդ:

Ուրախացի՛ր, Աստուածածին Մարիամ, պարկեշտասէր եւ սրբասուն վարքով. ոչ թէ մեր օրինակով, այլ անճառելի կերպով յղացար ու ծնար էմմանուէլը՝ ըստ Եսայիի մարգարէութեան. որովհետեւ իրապէս մանուկ մը ծնաւ մեզի՝ Հոգիին նկարումին համաձայն, եւ զաւակ մը բարձրեալին՝ համաձայն հրեշտակապետի աւետիսին: Որովհետեւ հօր ու մօր անուանակոչութենէն իսկ առաջ՝ պիտի տիրանայ Դամասկոսի զօրութեան եւ Սամարիոյ աւարին. եւ այլեւս պիտի չվախնանք որ տիրեն մեզի երկու ծխալից, խանձող թագաւորները, այսինքն՝ մահն ու դժոխքը. որովհետեւ «Ամէնուն վրայ մեծ թագաւորը Աստուած է»:

Դարձեալ ուրախացի՛ր, մերօրինակ հարսանիքներէն անտեղեակ երկնային հարս եւ չհարսնացած Մարիամ, որ սքանչելապէս ծնար Փառքի Աստուած էմմանուէլը, գեղուղէշ արմատը բուսցուցիր անընդհատ հողի մէջ, եւ սուրբ Հոգիին շնորհիւ անկէզ մնացիր մերօրինակ սաղմնատիպ յարաբերութիւնէ. այլեւ հեթանոսներուն մէջ եւս ճղարձակած՝ առհասարակ համատարած ծաւալեցաւ ուղէշարձակ եւ քաղցրաբեր այն արմատը՝ որ քեզմէ յայտնաբերուեցաւ ամէն անոնց՝ որոնք սրտանց պապական ին աստուածգիտութեան:

Դարձեալ ջերմեռանդութեամբ եւ փութալիւր, գովասանական թախանձագին այս տուրքը, բազմաճիւղ բունին օրինակով, սուրբ Հոգիին ճաճանչագեղութեան պսակազարդ փողփողումով, մեր նուաստ արուեստով կ'ընծայաբերենք քեզի, ո'վ Տիրուհի, պանծացուած սրբասուն մեր քոյրը՝ դուստր մարգարէութիւններուն, սուտակ գոհար եւ լուսալիւր շափիւղայ, լաւագոյնս գովաբանուածդ՝ Սիրոնի դուստրերուն մէջ: Որովհետեւ շատերը չհաւնած՝ քեզ ընտրեց ամէնուն Հայրը, եւ իր սիրելի միածինը զրկեց բնակելու համար մարդկային մարմնին մէջ՝ սուրբ Հոգիին քու մէջ ներգործութեամբը:

Ուրախացի'ր, պարկեշտուհի Մարիամ, դուստր աբրահամեան աւետիսին, բողբոջ Իսահակի, որ անապական եւ սքանչելապէս ծնար Աստուծոյ զօրութիւնն ու իմաստութիւնը, արարածներուն անդրանիկը եւ արարիչը համայն գոյութիւններուն, հրեշտակներու արքան՝ որ այսօր մանկացաւ եւ տիեզերքը դարձուց կեանքի մանկութեան:

Դարձեալ աստուածալայել սրտով եւ բարեզուարճ ուրախութեամբ ուրախացի'ր, չհարսնացած Մարիամ, ե'ւ քաղցրաբարոյ կոյս, ե'ւ հրաշագործ երանաւէտ հարս՝ ծննդաբերութեամբ. մէջդ առաւելագոյնս կը կուտակես եղեմական գետին վտակները՝ որպէսզի ոռոգելով արեցնես փափկութեան դրախտին բազմատեսակ տունկերը. զանոնք այսօր կ'ըմբռնենք իբրեւ բուրաստանի պէս ծաղկած եկեղեցւոյ մանուկներ՝ վերընձիւղած հաւատքով անարգել սնած Քրիստոսի հաւատքին յորդախաղաց վարդապետութեան մէջ:

Ուրախացի'ր կատարեալ սրտով, Մայր լոյսի, Աստուածածին Մարիամ, աստուածախառն սեղան. ինչպէս որ հրաման տրուեցաւ Մովսէսին մարդկային հնարաւորութիւններէն վեր, անտաշ քարերով կառուցուած՝ Աստուծմէ ընդունելի արձան մը կանգնել, այսպէս պարկեշտասէր անձդ եւս արժանաւոր եւ մերօրինակ հարսանիքին անփորձ հանդիսացաւ, որովհետեւ սուրբ Հոգիին շնորհներով պատսպարուած՝ սեղան եղար ընդունելու համար երկինքէն իջած երկնային հացը՝ որ կեանք կու տայ համայն աշխարհին:

Ուրախացի'ր, Մարիամ, խնդամիտ սրտով հլու եւ անմեղ աղանի, օրհնուածդ կիներուն մէջ, մտերիմ Քրիստոսի՝ ինչպէս սահմանուեցաւ ըստ Նքեկիէի. որովհետեւ դո'ւն ես դուռը Իսրայէլի տէր Աստուածի արեւածագին եւ մայրամուտին. որովհետեւ անհաս եւ անճառ խորհուրդներով բերրի է երկնապարծ ամենասուրբ կուսութեանդ դուռը:

Դարձեալ ուրախացի'ր երկնառաք աւետիսով, շնորհալից սրտով բերկրունդ, մայր մեր Աստուածին՝ Քրիստոսի, որ, երկինքին եւ երկրին անպարագելի եւ անբովանդակելի հրաշագործութեամբ, ինքնայօժար սրտով բարեհաճեցաւ իննամսեայ ժամանակով գեղազարդուիլ հոգեակար արգանդիդ մէջ, մինչեւ որ ծնար արարածներուն անդրանիկն ու արարիչը՝ հրեշտակին խօսքին համաձայն:

Ուրախացի՛ր, Մարիամ, օրհնուածդ կիներուն մէջ, երանելի՛ (քեզ) տեսնողներուն եւ ցանկալի՛ չտեսնողներուն, հոգեբուլ ջրհոր՝ լեցուած աստուածիմաստ խոհական կարօտովը կենդանի եւ ա՛լ չծարացնող ջուրին՝ զոր Սամարուհին տենչաց ջուրի անձկութեամբ պապակած (իր) ճամբորդութեան. զոր Դաւիթ, Իսրայէլի թագաւոր մեծ մարգարէն եւս հոգեւին կը ցանկար. «Երանի՛ կարենայի խմել Բեթլէհէմի մուտքի ջուրէն»։ Եւ տեղին է մարգարէին դիտաւորութիւնը, որովհետեւ մօտ էր Քրիստոսի փառաւոր գալուստը։ Իսկ երբ երեք կառամարտիկ զօրավարները վանելով այլազգիներու ասպատակները փափաքած ջուրը կը բերէին թագաւորին՝ չուզեց խմել, որովհետեւ, իր ծերութեան, տակաւին ժամանակը չէր հասած՝ Քրիստոսի քեզմէ՛ ծնելուն. թէեւ մարգարէին անձն ու մարմինը, եւ աստուածատուր իմաստութեամբ եւ գիտութեամբ օժտուած հոգին անցաւ, երկրէն վեր, ասպարէզներէն դիւագոռնդ փաղանգներուն, որոնք, իրենց խաբէութեամբ, մարդիկ թշնամի կ'ընեն Աստուծոյ։

Ուրախացի՛ր, Մարիամ, տիեզերաբաղձ ոսկետուփ՝ զարդարուած անուշահոտ խոնկերով, եւ մաքրափայլ անօթ՝ միւռնոսեփման բուրումով. որովհետեւ գունագեղ վարդերու, շուշաններու եւ հովիտներու ծիծղուն մանուշակներուն օրինակով գեղեցկացած է հասակը, չհարսնացած Մարիամ, պարկեշտասէր վարքով ու առաքինական սըրբութիւններով։ Որուն համար մեզմէ՛ եւս ընդունէ՛ խօսքերու այս ընծան, թէեւ երբեք կարօտ չես մեր նուաստութեան դրուատիքներուն. գովասանութեան չափանիշը ո՛չ թէ մարդոցմէ, այլ Աստուծմէ կ'ընծայուի քեզի, ո՛վ Տիրուհի կոյս եւ Աստուածածին Մարիամ։

Արդ, այսպիսի խրախուսիչ եւ հոգեւոր կուսական տօնախմբութեանս, ո՛վ սիրելիներ, բազմաջան փութով յօժարեցէք այս օրուան շնորհաբաշխութեան. երիտասարդներ եւ կոյսեր, ծերեր եւ մանուկներ, վայելչապէս եւ փութով փոխեցէք մարմնական թմբկահարութիւնները հոգեւորներուն հետ, որովհետեւ ա՛յս իսկ է բարեբաստիկ առիթը անարգել եւ անխափան ուղեւորութիւն երկնքի արքայութիւն, դէպի Յիսուս Քրիստոս մեր տէրը, որուն փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։